

Թաղիս մէջ իբր հարիւր քսան տուն կայ Հայո: Օղափոխութեան համար այլեւայլ թաղերէ հոս կու գան ամառներն եւ տենդ առնելով յետ կդառնան:

Գիւղիս տենդը շատ գլխացաւ կու տայ. երեք օրը անգամ մը կբռնէ, իմ Պտոյտիս պէս, որ երեք օրը անգամ մը կհրատարակուի....:

Շատերն ալ գինի առնելու համար կու գան եւ առանց գինովնալու չեն վերադառնար:

ԻԸ.

ԳԱՆՏԻԼԼԻ

Ահա գեղ մը, ուր ոչ *քօլերա* մտած է եւ ոչ նորաձեւութիւն:

Հայո քսան եւ հինգ տուն կայ:

Պ. Աբրահամ Այվազեան քանի մը տարիներ առաջ հանգանակութիւն ընելով՝ յաջողած է կանգնել վարժարան մը, որուն մէջ թաղին տղաները միշտ կկարդան այն բաները, զորս կ'աւանդեն մանկավարժներն նախնական դպրոցներու մէջ: Աւելորդ է ըսել, թէ կամ թաղին տղաները բնաւ չեն մեծնար եւ կամ թաղեցին աղքատ լինելով՝ դասատուի մը ամսական վճարելու կարողութիւն չունի: Գիտենք որ այս դպրոցին մէջ տարին քանի մը անգամ *պէօրէկ* կ'ուտեն աշակերտները, բայց չգիտենք, թէ տարին քանի՝ անգամ ծեծ կ'ուտեն:

Գեղիս ազգայիններն մեծ մասամբ նաւավար են. եկեղեցին կյաճախեն եւ գինետուն բնաւ չեն երթար: Դիտողութեան արժանի է, որ յօգուտ Հայաստանի սովեալներու երեսուն ոսկի գոյացաւ այն նուէրներէն, որք հաւաքուեցան այս գիւղին մէջ:

Կիներն *եսգմա* կբանին եւ ստակ շահելով երբեմն իրենց ամուսիններուն պարտքերն ալ կը վճարեն: Կիներն էին, որ անցեալ տարի կռուեցան գերեզմանատան մէջ գերեզմանի խնդրոյն համար:

Ասոնք պարգասէր, աշխատասէր եւ հաւատարիմ ըլլալով հանդերձ՝ ազգային զգացում այլ կկրեն. իրենց աղջիկները միշտ ազգային երգեր կերգեն:

Ծեր քահանայ մը ծեր ժամանակէ մ'ի վեր քահանայութիւն կգործէ եւ վէճի մը առիթ տուած չէ բնաւ: